



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 29-ի թիվ 103-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/65-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԷՄԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Էմին Խաչատրյանին (արտոնագիր թիվ 911) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության դատախազության Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ս.Վ.Մնացականյան (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ՝ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնում 25.04.2016թ. հարուցված թիվ 31102416 քրեական գործով մեղադրյալ Ռաֆայել Թադևոսյանի պաշտպաններ են ներգրավվել փաստաբաններ Էմին Խաչատրյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) և Էդգար Բադեմյանը՝ քրեական գործի նախաքննության ընթացքում անընդմեջ իրականացնելով մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը:

Դիմողը նաև հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդել է տուժողին, մեղադրյալին և պաշտպաններին, պատշաճ ծանուցելով (ծանուցագրեր, էլեկտրոնային փոստերին նամակներ ուղարկելով) պաշտպաններին գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը՝ 09.11.2016թ. ժամը 15:30-ին, և տեղը՝ ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ում, որտեղ նշանակված օրը և ժամին քրեական գործի նյութերը ներկայացրել է մեղադրյալին՝ ծանոթանալու համար, իսկ պատշաճ ծանուցված պաշտպանները ծանոթացման չեն ներկայացել: Սակայն, մեղադրյալը գործի նյութերի ծանոթացման արձանագրության մեջ գրառում է կատարել, որ չի ցանկանում ծանոթանալ

գործի նյութերին, այլ կծանոթանա միայն իր պաշտպան էմին Խաչատրյանի ներկայությամբ, քանի որ չգիտի, թե որ փաստաթղթերին ծանոթանա:

Դիմողը նաև ընդգծել է, որ նշված օրը՝ 09.11.2016թ., մինչև քննիչի կողմից քրեական գործի նյութերը մեղադրյալին ներկայացնելը, պաշտպան էմին Խաչատրյանը տեսակցել է մեղադրյալին: Այնուհետև, քննիչը, հաշվի առնելով պաշտպանների այլ գործերով ծանրաբեռնվածությունը, ինչպես ծանուցագրեր ուղարկելով, այնպես էլ հեռախոսակապի միջոցով 10.11.2016թ. հեռախոսազրույց է ունեցել պաշտպան էմին Խաչատրյանի հետ՝ նրան հայտնելով մեղադրյալի միջնորդության և 15.11.2016թ. ժամը 14:30-ին, ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ում մեղադրյալի հետ միասին քրեական գործի նյութերին ծանոթանալու մասին, սակայն նշված օրը պաշտպանները կրկին չեն ներկայացել, և մեղադրյալը հրաժարվել է առանց պաշտպանների գործի նյութերին ծանոթանալ ու ստանալ գործի ամբողջ նյութերի պատճենները, որից հետո քննիչը ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով է գործի նյութերի պատճենները հանձնել մեղադրյալին, ով կրկին հրաժարվել է ստանալ գործի նյութերի պատճենները:

Գրությամբ նաև նշվել է, որ քննիչը պաշտպաններին նորից ծանուցագրեր է ուղարկել՝ մինչև 20.11.2016թ. գործի նյութերին ծանոթանալու մասին, բայց այս անգամ էլ պաշտպանները չեն ներկայացել: Պաշտպանների կողմից որևէ գրավոր հիմնավորում չի ներկայացվել քննիչին չներկայանալու պատճառների մասին: 22.11.2016թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, ըստ էության քննության առնելու համար:

Գրությամբ կարևորվել է նաև այն հանգամանքը, որ պաշտպան էմին Խաչատրյանը, ով անհարգելի պատճառով չի ներկայացել գործի նյութերին ծանոթանալու, 09.11.2016թ.-ից մինչև գործը դատարան ուղարկելը, 14.11.2016թ. և 16.11.2016թ. միջնորդություններ է ներկայացրել քննիչին, որոնք քննարկվել են, ապա 16.11.2016թ. քննիչին բացարկ է հայտնել, որը դատախազի կողմից քննարկվել և մերժվել է, ու կայացված բոլոր որոշումները պատշաճ կերպով ուղարկվել են մեղադրյալին և պաշտպանին: Իսկ մեղադրյալի մյուս պաշտպան Էգդար Բաղեմյանը քննիչի հետ 09.11.2016թ. հեռախոսազրույցի ժամանակ թեև հայտնել է, որ մեղադրյալի հետ պայմանագիրը խզվելու է, այդուհանդերձ չի ներկայացել մեղադրյալի ներկայությամբ այդ փաստն արձանագրելու համար:

Գրությամբ Դիմողը գտել է, որ պաշտպաններ էմին Խաչատրյանը և Էգդար Բաղեմյանը բարեխղճորեն չկատարելով իրենց պարտականությունները՝ զրկել են մեղադրյալ Ռաֆայել Թադևոսյանին քրեական գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից, այն դեպքում, երբ մեղադրյալը ցանկություն է հայտնել պաշտպան էմին Խաչատրյանի հետ միասին գործի նյութերին ծանոթանալու մասին, որը քննիչի կողմից ապահովվել է, սակայն այդ դեպքում էլ նրանք չեն ներկայացել գործի նյութերին ծանոթանալու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ Դիմողը խնդրել է քննարկել փաստաբաններ էմին Խաչատրյանի և Էգդար Բաղեմյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 22.02.2017թ. թիվ 24-Ա/ԿԳ-17004 որոշմամբ փաստաբան էմին Խաչատրյանի (արտոնագիր թիվ 911) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ.

թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 6.1.1. ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով, իսկ փաստաբան Էդգար Բադեմյանի (արտոնագիր թիվ 1390) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:

27.02.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Ի լրումն 18.01.2017թ. թիվ 61-29/17 գրության ՀՀ դատախազության Գեղարքունիքի մարզի դատախազությունից ստացվել է գրություն, որով ներկայացվել են գրավոր ապացույցներ՝ կարգապահական վարույթին կցելու և համատեղ քննության առնելու միջնորդությամբ:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

08.02.2017թ. Պալատ մուտքագրված բացատրությամբ Էմին Խաչատրյանը նշել է, որ գրությամբ հայտնված այն տեղեկությունները, թե մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդել է տուժողին, մեղադրյալին և պաշտպաններին, պատշաճ ծանուցելով (ծանուցագրեր, էլեկտրոնային փոստերին նամակներ ուղարկելով) պաշտպաններին գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և վայրը, բացարձակապես իրականությանը չեն համապատասխանում, քննիչը փորձել է իր պաշտպանյալին ներքաշել քննչական գործողության մեջ:

Այնուհետև, բացատրությամբ Էմին Խաչատրյանը ներկայացրել է քրեական գործի առնչությամբ իր կողմից կատարած գործողությունները, քննիչի գործողությունները և դրանց դրդապատճառները:

Էմին Խաչատրյանը նաև հայտնել է, որ քննիչ Ա.Մկրտչյանն իր էլետրոնային փոստին հաղորդագրություն է ուղարկել՝ իր պաշտպանյալ Ռ.Թադևոսյանի հետ 15.11.2016թ. «Հրագրան» ՔԿՀ-ում նախատեսված քննչական գործողությանը մասնակցելու մասին, որին ի պատասխան ինքն էլետրոնային փոստի միջոցով հայտնել է, որ 15.11.2016թ. ժամը 14:30-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում նախապես նշանակված քրեական գործով զբաղվածության պատճառով չի կարող ներկայանալ, և խնդրել է հետաձգել քննչական գործողությունը:

Փաստաբան Էմին Խաչատրյանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, գտել է, որ քննիչի կողմից չեն պահապանվել քրեական գործի նյութերին ծանոթանալու կարգը և խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Պատասխանողը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին է ներկայացրել իր պաշտպանյալ Ռաֆայել Վեմիի Թադևոսյանի կողմից գրված հայտարարությունը, որով վերջինս հայտնում է, որ իր պաշտպան Էմին Խաչատրյանից որևէ դժգոհություն

չունի, նրա բոլոր գործողությունները եղել են իր հետ համաձայնեցված և բխել են իր շահերից, այդ թվում՝ նյութերի ծանոթանալու համար չներկայանալու գործողությունը:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել: 29.06.2017թ. Պատասխանողը ներկայացրել է գրություն, որով խնդրել է կարգապահական գործով խորհրդի նիստը անցկացնել իր բացակայությամբ:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

27.04.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, իսկ 27.04.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունիսի 29-ին, ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնում 25.04.2016թ. հարուցված թիվ 31102416 քրեական գործով մեղադրյալ Ռաֆայել Թադևոսյանի պաշտպան է ներգրավվել փաստաբան Էմին Խաչատրյանը: Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:

2) 09.11.2016թ. Պատասխանողը միջնորդել է առերես հարցաքննություն կազմակերպել իր պաշտպանյալի դեմ ցուցմունք տված անձանց հետ, 10.11.2016թ. միջնորդություն է ներկայացրել իր պաշտպանյալի նկատմամբ դադարեցնել քրեական հետապնդումը՝ հանցակազմի բացակայության հիմքով, 14.11.2016թ. Պատասխանողը բացարկ է հայտնել գործով վարույթն իրականացնող քննիչ Ա. Մկրտչյանին: Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից Խորհրդին տրամադրված 09.11.2016թ. և 10.11.2016թ. միջնորդությունների, 14.11.2016թ. բացարկի պատճեններով, Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:

3) 09.11.2016թ. ժամը 15:45-ին՝ ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ում քննիչ Ա. Մկրտչյանը քրեական գործի նյութերը ներկայացրել է մեղադրյալ Ռաֆայել Թադևոսյանին՝ ծանոթանալու համար, սակայն պաշտպան Էմին Խաչատրյանը ծանոթացման չի ներկայացել: Մեղադրյալը գործի նյութերի ծանոթացման արձանագրության մեջ գրառում է կատարել, որ չի ցանկանում ծանոթանալ գործի նյութերին, այլ կծանոթանա միայն իր պաշտպան Էմին Խաչատրյանի ներկայությամբ, քանի որ չգիտի, թե որ փաստաթղթերին

ծանոթանա: Նշված փաստը հաստատվում է *Դիմողի կողմից խորհրդին տրամադրված 09.11.2016թ. արձանագրության պատճենով, Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:*

4) 09.11.2016թ. ժամը 15:30-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժին ներկայանալու մասին ծանուցագիրը հնարավոր չի եղել հանձնել Աբովյան քաղաքի 7-րդ մ/շ 1-ին թաղամաս 177 տան բնակիչ Էմին Խաչատրյանին, քանի որ վերջինս բացակայում էր իր բնակության վայրից: Նշված փաստը հաստատվում է *Դիմողի կողմից խորհրդին ներկայացված ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի պետի 09.11.2016թ. գրության պատճենով:*

5) 15.11.2016թ. ժամը 15:20-ին ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ում քննիչ Ա. Մկրտչյանը քրեական գործի նյութերը ներկայացրել է մեղադրյալ Ռաֆայել Թադևոսյանին՝ ծանոթանալու համար, սակայն պաշտպան Էմին Խաչատրյանը ծանոթացման չի ներկայացել, իսկ մեղադրյալը հրաժարվել է առանց պաշտպանի գործի նյութերին ծանոթանալ ու ստանալ գործի ամբողջ նյութերի պատճենները: Նշված փաստը հաստատվում է *Դիմողի կողմից խորհրդին տրամադրված 15.11.2016թ. արձանագրության պատճենով, Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:*

6) Պաշտպան Էմին Խաչատրյանը էլետրոնային փոստի միջոցով հայտնել է, որ 15.11.2016թ. ժամը 14:30-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում նախապես նշանակված քրեական գործով զբաղվածության պատճառով չի կարող ներկայանալ 15.11.2016թ. ժամը 14:30-ին նշանակված քննչական գործողությանը, և խնդրել է նախօրոք ծանուցել քննչական գործողությունների մասին: Նշված փաստը հաստատվում է *Դիմողի կողմից խորհրդին տրամադրված էլեկտրոնային փոստից տրված հաղորդագրությամբ, Պատասխանողի բացատրությամբ:*

7) Մինչև 20.11.2016թ. պաշտպան Էմին Խաչատրյանը չի ներկայացել Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա. Մկրտչյանի մոտ՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Նշված փաստը հաստատվում է *Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությունով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 29.06.2017թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/357-17 տեղեկանքի համաձայն Էմին Խաչատրյանն արտոնագիրը ստացել է 29.09.2009թ.: Էմին Խաչատրյանի նկատմամբ 2009-2017թթ ժամանակահատվածում հարուցվել է 4 կարգապահական վարույթ, որոնցից երկուսը Պալատի խորհրդի 05.02.2012թ. թիվ 16 և 18.12.2012թ. թիվ 26ԿԳ/1 որոշումներով կարճվել է: Պալատի խորհրդի 22.02.2013թ. թիվ 7ԿԳ/1 և 24.06.2013թ. թիվ 29ԿԳ/1 որոշումներով Էմին Խաչատրյանն ենթարկվել է կարգապահական պատասխանողության նկատողության ձևով, տույժերը մարված են:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Էմին Խաչատրյանի նկատմամբ Կանոնագրքի 6.1.1. ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ **Օրենք**) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է

կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 6.1.1 ենթակետի համաձայն՝ Վստահորդի շահերը մինչդարական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

Հիշյալ վարքագծի կանոնը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին: **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝** պաշտպանը պարտավոր է՝ (...) կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:

Սույն կարգապահական վարույթը հարուցվել է փաստաբան Էմին Խաչատրյանի նկատմամբ՝ 09.11.2016թ., 15.11.2016թ. և մինչև 20.11.2016թ. քննչական գործողություններին՝ քննչական գործողություններին քննիչի կանչով փաստաբան Էմին Խաչատրյանի չներկայանալու վարքագիծը ստուգելու նպատակով: Փաստաբանի վարքագիծը ստուգելու նպատակով նախ անհրաժեշտ է պարզել 09.11.2016թ., 15.11.2016թ. և մինչև 20.11.2016թ. քննչական գործողությունների վերաբերյալ փաստաբան Էմին Խաչատրյանի պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի պահանջների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Նման խախտումը կարող է իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և ենթակա են ապացուցման, և համաձայն Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետև նաև՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի**, առ այն, որ *Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*, ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը:

Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն 09.11.2016թ. և մինչև 20.11.2016թ. քննչական գործողությունների վերաբերյալ փաստաբան Էմին Խաչատրյանի կողմից քննչական գործողությունների վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը, մասնավորապես՝ Պատասխանողի կողմից ծանուցագրերը ստանալու հանգամանքը: Ավելին, գործում առկա է ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի պետի 09.11.2016թ. գրության պատճենը, որի համաձայն 09.11.2016թ. ժամը 15:30-ին ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժին ներկայանալու մասին ծանուցագիրը հնարավոր չի եղել հանձնել Աբովյան քաղաքի 7-րդ մ/շ 1-ին թաղամաս 177 տան բնակիչ Էմին Խաչատրյանին, քանի որ վերջինս բացակայում էր իր բնակության վայրից:

Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Էմին Խաչատրյանը ստացել է 15.11.2016թ. քննչական գործողության վերաբերյալ ծանուցում, սակայն ներկայացված էլեկտրոնային փոստի հաղորդագրության պատճենից հնարավոր չէ պարզել, երբ է այն ստացվել Պատասխանողի կողմից: Խորհուրդն արձանագրում է նաև, որ փաստաբան Էմին Խաչատրյանը էլեկտրոնային փոստի միջոցով հայտնել է, որ 15.11.2016թ. ժամը 14:30-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում նախապես նշանակված քրեական գործով զբաղվածության պատճառով չի կարող ներկայանալ 15.11.2016թ. ժամը 14:30-ին նշանակված քննչական գործողությանը, և խնդրել է նախօրոք ծանուցել քննչական

գործողությունների մասին:

Համաձայն **Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝** Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարականոնությունը կրող կողմը, տվյալ դեպքում Դիմողը:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսավել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:

Պատասխանողի կողմից քննչական գործողությունների վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելու հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Էմին Խաչատրյանի նկատմամբ Կանոնագրքի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված ենթակետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 22.02.2017 թվականի թիվ 24-Ա/ԿԳ-17004 որոշմամբ փաստաբան Էմին Խաչատրյանի (արտոնագիր թիվ 911) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 6.1.1. ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան